№ 112 Յունիսի 20 (Յուլիսի 2) 1881 Յունիսի 20 (Յուլիսի 2) № 112

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են այսպէս
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Ճէրիդէի Հաւադիս» լրագրի յօդուած. «Порядокъ» լրագրի թղթակցութիւն. Նամակ Թիւրքիայից.—Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դաւիթ բէկ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոսկվա, յունիսի 8

Խնդրեմ երկտողիս տեղ շնորհել «Մշակում»։ Նամակովս ես չեմ պաշտպանում ոչ ոքի, այլ, ինչպէս ընթերցող հասարակութեան մի անդամ, արտայայտում եմ այն տպաւորութիւնը, որ թողեց ինձ վրա մի չափազանց տխուր երեւոյթ։

Ում որ թանգ է աշխարհաբառ լեզուի զարգացումը, նրան չէին կարող չը վիրաւորել «Փարոսի» վերջին տետրի վերջին տողերը։ Համարձակվում եմ կարծել, որ ամեն մէկը կը համաձայնի այն մտքի հետ, թէ աշխարհաբառի կանոնաւոր զարգացման նպաստող միջոցներից մէկը պէտք է լինի պարբերական մամուլը։ Այստեղ ստեղծվում են նոր բառեր, նոր դարձուածներ, այստեղ բնականապէս որոշվում է այս կամ այն քերականական ձեւի գերազանցութիւնը ուրիշի առաջ, այստեղ պարզվում են միայն գործնականապէս առանց թէօրիքական դատողութիւնների բազմաթիւ վիճելի հարցեր լեզուի վերաբերութեամբ։ Պարզ է, որ մեր պարբերական հրատարակութիւնների դերը աշխարհաբառի զարգացման խնդրի մէջ շատ նշանաւոր եւ ծանր է։ «Հիւսիսափայլ», «Մշակ», «Մեղու», «Փորձ» եւ «Մանկավ. Թերթ»—դրանք բոլորն էլ իրանց ուժերին համեմատ նպաստել եւ նպաստում են նորածին գրականական լեզուի կազմակերպութեանը։ Իսկ «Փարոսը» մասնակցում է արդեօք այդ ընդհանուր աշխատութեանը։ Այո, ինչպէս չէ միայն հակառակ կողմից։ Բաւական չէ, որ նա յամառութեամբ հետեւում է հին, փտած աւանդութիւններին լեզուի մասին, բաւական չէ որ նա արհամարհում է նոր կեանքի կենդանի պահանջները, *) «Փարոսի» հրատարակողը թոյլ է տալիս իրան մի վարմունք, որ կարելի է ներել մի զռռող բիւրօկրատի իր ստորադրեալների վերաբերութեամբ, բայց մամուլի ներկայացուցչին—երբէք։ Եթէ ընթերցողը յիշում է սրանից մի փոքր առաջ լեզուագէտ պ. Սարգսեանցը իր գեղեցիկ յօդուածում հիմնաւորապէս քննել էր «Փարոսի» անկանոն եւ դժուարամարս լեզուն։ «Փարոսում» ընթերցողը կը գտնի պատասխան, մի տարօրինակ, մամուլի ներկայացուցչի կողմից մի անվայել պատասխան՝—«գրեցէք ինչքան ուզում էք, մենք ձեր խրատները լսող չենք... Գրեցէք, լցրէք «Մշակի» էջերը, ձեր խօսքը մեզ համար կը լինի ձայն բարբառոյ յանապատի»...

Ի՞նչ հասկանանք այս պատասխանից։ Չէ որ դրա ամեն մի բառը շնչում է կրքով, կամակորութեամբ եւ կապրիզով։

Գրելու, դատելու եւ փաստերով հակաճառելու ընդունակութիւնը առել է Աստուած։ Բարբոնութիւնն էր պակաս մեր անբաղդ մամուլին,—ճշմարիտ որ պակաս էր։ Ամեն բան արին նրա հետ։ Նրան դարձրին ազխտութեան եւ յետադիմութեան արտայայտիչ, նրան անարգ կերպով ծառայեցրին ամեն մի վայրենի, կոպիտ ինստինկտների, նրան դարձրին մասնաւոր, անձնական հաշիւների օրգան, նրա միջոցով ցինիկութեան եւ ուշանցառութեան սրուակի մէջ վարժութիւններ անել չամաչեցին—գեներալական սրտաումն էր պակաս, պակաս էր բիւրօկրատական կապրիզը, самодурство... Դրան էլ արժանացաւ մեր մամուլը։ Խեղճ!

Ս. Գաղեանց

---

*) Խօսքս միայն «Փարոսի» խմբագրական լեզուի մասին է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, շաբաթ օր, յունիսի 20-ին վրաց թատրոնական խումբը տալու է Արծրունու թատրոնում Էմիլ-դը-Ժիրարդէնի «Մի կնոջ տանջանք» պիէսան։ Ներկայացումը լինելու է յօգուտ խմբի կառավարիչ պ. Զորինովի։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Իգդիրից 3 վերստ հեռու Խալֆալու գիւղում մի երիտասարդ փորձում է բռնաբարել իր քրոջ աղջկան, տանելով նրան դաշտը։ Աղջիկը ընդդիմանում է նրան, այն ժամանակ սա կապում է օրիորդի ձեռքերն ու ոտները եւ սկսում է ծեծել նրան։ Գործը շուտով յայտնվում է, գնում են դաշտը եւ գտնում են աղջկան կիսամեռ ընկած, կապած ձեռքերով։ Տղան փախել է Թիւրքիա, իսկ գործը յանձնվել է քննիչին»։

—

Մեզ գրում են որ Իգդիրի դպրոցը փակված է հոգաբարձութեան թուլութեան պատճառով։ Երեք ամիս է որ ուսուցիչների ռոճիկները վճարված չեն։ Ուսուցիչները ստիպվեցան դատաստանի դիմել, իսկ հոգաբարձութիւնը բոլորովին անտարբեր է մնում։ Թղթակիցը հրաւիրում է այդ անցքի վրա թեմական տեսչի ուշադրութիւնը։

—

ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեզ գրում են որ այդտեղի մրգի ծառերը այս տարի բոլորն էլ որդնակեր եղան, բացի կեռասներից։ Ամեն մի տերեւի վրա անհաշիւ որդունքներ կան բուն դրած։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՃԷՐԻՏԷ ՀԱՒԱԴԻՍ" ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾ

—

Ճէրիտէ «Օսմանեան Ասիա» վերնագրով երկար յօդուած մը կը հրատարակէ այս առաւօտ, յորում Օսմ. Ասիոյ տէրութեան միւս մասերէն աւելի կարեւորութիւն ունենալը յայտնելով կըսէ թէ Ռուսիա Պարսկաստանի հետ համաձայնութեամբ մեզ կրնայ վնասել, բայց մեզի համար աւելի վտանգաւորը Ռուսիոյ Հայերը Պօլսոյ Հայոց հետ քաղաքականապէս միացնելն է. Ռուսիա մտադիր է Տաճկաստանի Հայերը շահելով, Պուլղարիոյ խաղը Հայաստանի մէջ ալ խաղալ, որով Ասիոյ կողմէն նորանոր դժուարութիւններ պիտի ծագին մեր առջեւ։

Ճէրիտէ հետեւեալ կերպով կը շարունակէ։

„Պօլսոյ Հայկական մամուլը այս նպատակին գործիք ըլլալու ջանք մը կայ, եւ անցեալ օր մեր գրած տաւէլօն ասոր ապացոյց է։ Տփխիս այժմ քօմիթէներու կազմութեան կեդրոն եղած է, ուր Ռուսիոյ Հայոց բարեկեցութեան եւ Քիւրտերու հարստահարութեանց վրայ կը խօսուի շարունակ. եւ եթէ իրաց այս վիճակը նկատողութեան չառնուի, մեծ խնդիր մը կրնայ ծագիլ. վասն զի չենք կրնար ըսել թէ Հայոց մէջ Զանգօֆներու նման անձինք անպակաս են, որք 35 տարի գաղտնի գործելով, զմեզ յանկարծակիի բերին։

„Թէեւ չենք յուսար որ հաւատարիմ Հայք Ռուսիոյ ուռկաններուն մէջ իյնան, սակայն Ռուսաց եւ Պարսից բերանները Քիւրտերու երեսէն եղած հարստահարութիւններն յեղյեղելով միշտ, բնական է որ խնդիր մը ծագի։ Երբ զանգատները շատնան, հաւանական է որ պ. Կլատսթօն ալ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Մէլիք-Փարսադանի ձեռնարկութիւնը իսկապէս չէր հակառակում Բայինդուր իշխանի դիտաւորութեանը, այլ աւելի նպաստում էր նրան։

Իրաւ է, որ հայերը զինված էին լաւ հրացաններով, որ սպահանցի վաճառականների միջնորդութեամբ, Ռուսաստանի եւ Կասպից ծովի վրայով, ստացվել էին Եւրոպայից։ Հայ զինուորը առաջին անգամ տեսնում էր իր հրացանի ծայրին սուին եւ այդ այնքան զուարճացնում էր նրան, որքան մի նոր խաղալիք երեխայի ձեռքում։

Իսկ ընդհակառակն, թշնամու հրացանները բոլորովին հին ձեւի էին եւ սաստիկ ծանր։ Նրանք սուինների փոխարէն ունէին իրանց ծայրին երկճղի եղջիւրներ, որ շինված էին փայտից եւ ծառայում էին որպէս նեցուկ։ Եղջիւրները այնպէս էին յարմարեցրած, որ հեշտութեամբ շարժվում էին. արձակելու ժամանակ կարելի էր նրանց սուր ծայրերը ամրացնել գետնի մէջ, որպէս երկու ոտիկներ, եւ հրացանի փողը հօրիզօնական ձեւով կանգնեցնել նրանց վրա։ Այդ այն յարմարութիւնն ունէր, որ ծանր հրացանը դողդոջուն ձեռքի մէջ բնաւ չէր շարժվի։ Իսկ երբ պէտք չէր գործ ածել, կարելի էր եղջիւրները հրացանի փողի ուղղութեամբ շուռ տալ. այդ դրութեան մէջ նրանք սուինի ձեւ էին ստանում, միայն փայտից շինված. *)

Անձրեւը մանրիկ կաթիլներով դեռ մաղվում էր։ Բարեբախտաբար ցեխ չէր գոյացնում. աւազոտ հողը ծծում էր իր մէջ վերեւից թափված խոնաւութիւնը։ Բացի դրանից, լեռների տափարակները պատած էին կամ խիտ խոտաբոյսերով, կամ սալացած ապառաժներով, որոնց վրայից վազում էր ջուրը։

Այդ բոլոր հանգամանքները լցնում էին Մէլիք-Փարսադանի սիրտը անսահման ուրախութեամբ։ Ծերունի զօրապետը, կարծես, կրկին մանկացել, երիտասարդական աշխոյժ եւ եռանդ էր ստացել։ Խորտակված, միմեանց վրա դիզված ժայռերը, պատի նման ուղղաձիգ ապառաժները, լեռների դժուարելանելի զառիվերը, եւ տեղ-տեղ խորին խրամատները ամենեւին չէին վհատեցնում նրան։ Իր զօրքերի առաջին անցած, խրախուսում էր նրանց, սիրտ էր տալիս, եւ յորդորում էր առաջ մղվել։

—Դէ, զաւակներս, այդ սարն էլ անցնենք, թշնամին մեր ճանկերի մէջ կը լինի։

Իսկ նրա զաւակները առիւծի նման առաջ էին գնում, եւ բնաւ պէտք չունէին հրամանատարի քաջալերութեանը։

Երբ բաւական տարածութիւն անցան, ծերունի զօրապետը հրամայեց զինուորներին, որ փոքր ինչ հանգիստ առնեն, կազդուրվեն, վերջնական յարձակումը գործելու համար։ Նրանք անկանոն կերպով նստոտեցին քարերի վրա։ Ոմանք սկսեցին ծխել, ոմանք իրանց պարկերի միջից դուրս բերելով արաղի փոքրիկ սրուակները, խմում էին եւ իրանց ընկերներին «համեցէք» էին անում։ Նրանց զուարթ երեսները, շառագունած, փթթած լեռնային օդից ու եղանակի զովութիւնից, արտայայտում էին խորին բաւականութիւն։ Կարծես, խնճոյքի մէջ էին նստած, կամ հարսանիքի հանդէս էին կատարում։

Զինուորները մի առանձին համազգեստ չունէին, այլ կրում էին իրանց տեղային հագուստը, որ պատրաստված էր հայ կնոջ ձեռքով մանված բրդից, նրա ձեռքով գործված չուխից, եւ նրա մատներով կարված «գէյմայից»։ Այդ փոքր ինչ կոշտ գործուածները այն առաւելութիւնն ունէին, որ անձրեւի տակ թրջվելով, աւելի պնդանում էին եւ բոլորովին անթափանցիկ էին դառնում։ Այդ պատճառով, նրանք խիստ անհոգ կերպով նստած էին անձրեւի տարափի ներքոյ, միայն իրանց զէնքերը ծածկելով վերարկուների տակ։

Մինչ զինուորները նստած հանգստանում էին, ծերունի զօրապետը ոտքի վրա անհանգիստ կերպով այս կողմ եւ այն կողմ էր գնում։ Երբեմն կանգնում էր նա եւ ականջ էր դնում։ Մթին թուղպերի թանձրութիւնից, մի յիսուն քայլ հեռաւորութեան վրա, ոչինչ չէր կարելի տեսնել։ Աչքի փոխարէն ծառայում էր ականջը։ Ծերունի զօրապետի լսողութիւնը, չը նայելով նրա հասակին, դեռ չէր կորցրած իր վաղեմի սրութիւնը։ Նա հետազօտում էր ամեն մի աննշան շըշունջ, քննում էր ամեն մի անորոշ հնչիւն եւ ձայնահմայի *) նման նրանցից գուշակութիւններ էր անում։ Նա կանչեց իր մօտ Աւթանդիլ գնդապետին, ասելով.

—Նկատում ես, թշնամու հրացանների ձայնը հիմայ սկսեց նուազել, երեւում է, անձրեւը թոյլ չէ տալիս նրանց շուտ-շուտ կրակ տալ։

—Ես էլ այդպէս եմ կարծում, պատասխանեց գնդապետը, ինքն էլ նոյնպէս ականջ դնելով։

—Նկատում ես, դարձեալ հարցրեց ծերունի զօրապետը,—հրացանների ձայնը աւելի մօտից է լսվում, երեւում է, թշնամին մեզանից շատ հեռու չէ գտնվում։

—Նրանք այդ բլուրի ետեւումն են, խօսակցութեան մէջ մտաւ կաղ Օհանէսը, յանկարծ յայտնվելով, կարծես, գետնից բուսաւ նա։

—Ի՞նչ գիտես, հարցրեց ծերունի զօրապետը հետաքրքրութեամբ։

—Մի ժամ առաջ ես նրանց բանակի մօտից անցայ, այնքան մօտից, որ կարողացայ բոլորը տեսնել։ Եւ նա սկսեց պատմել իր տեսածները, որից երեւաց, թէ թշնամին բաւական բազմաթիւ է, թէ նրանց հրացանները, թէեւ բանի պէտք չեն, բայց ամենքն ունեն սրեր, որ ձեռնամերձ կռուի ժամանակ կարող են գործ ածել։ Մի քանի ուրիշ մանրամասնութիւններ ես հաղորդելուց յետոյ, աւելացրեց նա.

—Երեւում է, Բայինդուր իշխանը բաւական հեռու է գնացել, եւ գուցէ անցել է կիրճի միւս կողմը։ Թշնամին, որպէս ես նկատեցի, հոտը առել է. պատրաստվում էին շարժվել դէպի այն կողմը։

—Բայինդուրից շատ խէր չենք տեսնի, ասաց ծերունի զօրապետը ժպտալով, եւ դարձաւ դէպի Աւթանդիլ գնդապետը.

—Մերոնք բաւական կազդուրվեցան, հիմայ պէտք է վրա տալ. սկզբում հրացանի բանել, յետոյ սկսել ծակծկել....

Աւթանդիլ գնդապետը Դաւիթ բէկի հետ Վրաստանից եկած քաջերից մէկն էր, մօտ քառասուն տարեկան մի տղամարդ, որ յայտնի էր իր յանդուգն եւ անվեհեր անձնազոհութեամբ։

---

*) Այդ տեսակ եղջիւրաւոր հրացաններ այդ կողմերում այժմ գործ են ածում որսորդները, երբ պէտք էր խոշոր կենդանիներ սպանել։

*) Ձայնահմայ նչ. ձայներից գուշակութիւններ անող, որպէս էին Արմաւիրի սօսեաց անտառի քուրմերը։